

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 մարտի 2017 թվականի N33\_Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 2017թ. Հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2017 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» N11-Ա որոշմամբ հաստատված միջոցառումների պլանի 5.2.1 կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի 2017թ. փետրվարի 24-ի N20/240 գրությունը՝

#### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. 2017 թվականի մարտի 30-ին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով:

#### 2. Հաստատել՝

- 1) ուսումնավարժության ղեկավար կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.
- 2) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.
- 3) ուսումնավարժության միջնորդական խմբի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի.
- 4) ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն N 4 հավելվածի.
- 5) ուսումնավարժության մտահղացման բացատրագիրը՝ համաձայն N 5 հավելվածի.
- 6) ուսումնավարժության անցկացման պլանը՝ համաձայն N 6 հավելվածի.
- 7) ուսումնավարժության իրավիճակի գարգացման պլանը՝ համաձայն N7 հավելվածի:

#### 3. Ուսումնավարժությունում ընդգրկել՝

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի տարահանման հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի

մարզի Սիսիանի համայնքապետարանը, «Արմենտել» ՓԲԸ տեխնիկական բլոկի ֆիքսված կապի հարավային տարածքային կենտրոնը, «Հայաստանի էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ «Տաթև» մասնաճյուղը, «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Սյունիքի գազաֆիկացման գազամատակարարման մասնաճյուղը, Սյունիքի մարզային հիդրոմետ ծառայությունը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայություն» ՊՈԱԿ -ը:

4. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանին՝ կազմակերպել շտաբային ուսումնավարժության պատշաճ նախապատրաստումը:

5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ փ/ծ փոխգնդապետ Բագրատ Զաքարյանին՝

- 1) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի և ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օգնություն.
- 2) Սիսիան համայնքի ղեկավարի հետ ուսումնասիրել հավանական իրավիճակը, բնակչության պաշտպանության ու կենսապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման կարգը.
- 3) ճշգրտել «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլան»-ը.
- 4) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2017 թվականի մարտի 27 -ին:

6. Ուսումնավարժության մասնակիցներին՝

- 1) ճշգրտել քաղաքացիական պաշտպանության պլանները.
- 2) զեկուցել ուսումնավարժության ընթացքում իրականացրած միջոցառումների մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Վ. ՀԱԿՈՐՅԱՆ



2017թ. մարտի 2  
ք. Կապան

**ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄ**  
**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՅՎՈՂ**  
**ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԹՈՒԹՅԱՆ**

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Զբաղեցրած պաշտոնը
1.	Հակոբյան Վահե	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետ, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության պետ՝ ուսումնավարժության ղեկավար
2.	Դավթյան Վարդան	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ, ուսումնավարժության ղեկավարի տեղակալ
3.	Զաքարյան Բագրատ	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ փոխգնդապետ՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ
4.	Ավետիսյան Սեյրան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ՝ Սյունիքի մարզային տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալ
5.	Գրիգորյան Արսեն	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գորահավաքային նախապատրաստության բաժնի պետ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՅՎՈՂ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄ



*(Handwritten signature)*

Ռ.ՍԱՐԳՍՅԱՆ

**ԿԱԶՄ**

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ**

Հ/հ	Ազգանուն, Անուն, Հայրանուն	Զբաղեցրած պաշտոնը
1.	Սահակյան Ռոմա Յուրիկի	Սյունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ – պետի տեղակալ, փ/ծ փոխ/գ-տ, շտաբային ուսումնավարժության խաղարկման և վերլուծման խմբի ղեկավար
2.	Օվչյան Վիլեն Սերժիկի	Սյունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր, շտաբային ուսումնավարժության խաղարկման և վերլուծման խմբի անդամ
3.	Թամրազյան Լևոն Սամվելի	Սյունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, փ/ծ ավ. Լ-նտ, շտաբային ուսումնավարժության խաղարկման և վերլուծման խմբի անդամ
4.	Սավադյան Վարանցո Ռոմիկի	Սյունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի հրահանգիչ, փ/ծ կ-ն, շտաբային ուսումնավարժության խաղարկման և վերլուծման խմբի անդամ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ



ԿԱԶՄ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՇՏԱԲԱՅԻՆ ՌԻՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ

Հ/հ	Ռիսոմնավարժությանն ընդգրկված մասնակիցները	Միջնորդները	
		Պաշտոնը , կոչումը	Ազգանուն, Անուն
1.	Սյունիքի մարզի ԱԻ հանձնաժողով. Սյունիքի մարզի տարահանման հանձնաժողով.	Սյունիքի ՄՓՎ ԲՊ բաժնի պետ- պետի տեղակալ փ/ծ փոխ/գ-տ, միջնորդական խմբի ղեկավար	Բալայան Վրույր
2.	ՀՀ Ոստիկանության Սյունիքի մարզային վարչություն, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժին	Սյունիքի ՄՓՎ ԲՊ բաժնի ավագ հրահանգիչ փ/ծ մայրր	Պողոսյան Մարատ
3.	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչություն, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն	Սյունիքի ՄՓՎ ԲՊ բաժնի ավագ հրահանգիչ փ/ծ մայրր	Մինասյան Աննա
4.	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժին, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն	Սյունիքի ՄՓՎ ԲՊ բաժնի գլխավոր մասնագետ	Հարությունյան Արթուր
5.	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Սյունիք ԳԳՄ, Սյունիքի մարզային հիդրոմետ ծառայություն, ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայություն» ՊՈԱԿ	Սյունիքի ՄՓՎ ԲՊ բաժնի գլխավոր մասնագետ	Թադևոսյան Լամարա

6.	«Արմենտել» ՓԲԸ տեխնիկական բլոկի ֆիքսված կապի հարավային տարածքային կենտրոն, «Հայաստանի էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ «Տաթև» մասնաճյուղ	Սյունիքի ՄՓՎ Կապանի ՀՓԶ-ի հրամանատարի տեղակալ փ/ծ մայոր	Բարայան Դավիթ
7.	Սիսիան համայնք	Սյունիքի ՄՓՎ Սիսիանի ՀՓԶ-ի հրամանատար, փ/ծ կ-ն	Հովսեփյան Գարիկ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ



Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ  
 ՇՏԱՐԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ**

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետները	Պատասխանատու կատարողներ	Նշումներ կատարման մասին
1	2	3	4	5
<b>1. Դեկավարման և միջնորդական կազմի նախապատրաստում</b>				
1.	ՇՈՒ կազմակերպման և անցկացման փաստաթղթերի ուսումնասիրում	Մինչև 05.03	Ուսումնավարժության ղեկավար, Դեկավարման շտաբ	
2.	Միջնորդների անհատական պլանների մշակում և հաստատման ներկայացում	Մինչև 09.03	Միջնորդական խմբի ղեկավար	
<b>2. Ուսուցանվողների նախապատրաստում</b>				
3.	ՇՈՒ նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի հետ ծանոթացում	Մինչև 12.03	Դեկավարման շտաբ	
4.	Արտակարգ իրավիճակների բնագավառին առնչվող ՀՀ օրենքների և ենթաօրենսդրական փաստաթղթերի, իրավական ակտերի ուսումնասիրում	Մինչև 23.03	Դեկավարման շտաբ	

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ



## **Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր**

### **ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄՏԱՀՂԱՑՄԱՆ**

**Թեման՝** «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը ուժեղ երկրաշարժի դեպքում» :

#### **Ուսումնավարժության նպատակները՝**

- ա) Կատարելագործել ղեկավար կազմի հմտություններն ու ունակություններն ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման և իրականացման գործում:
- բ) Ստուգել «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլան»-ի իրատեսությունը:

#### **Ուսումնավարժության մասնակիցների կազմը՝**

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմը, ՀՀ Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը, ՀՀ Սյունիքի մարզի տարահանման հանձնաժողովը, Սիսիանի համայնքապետարանը, ՀՀ ԱԻՆ ՓԾ Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը, «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Սյունիքի գազաֆիկացման գազամատակարարման մասնաճյուղը, ՀՀ ԱԻՆ հիդրոոգեոթերաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության Սյունիքի մարզային հիդրոմետ ծառայությունը, «Արմենտել» ՓԲԸ տեխնիկական բլոկի ֆիքսված կապի հարավային տարածքային կենտրոնը, «Հայաստանի էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ «Տաթև» մասնաճյուղը, ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայություն» ՊՈԱԿ -ը:

#### **Անցկացման ժամանակը՝**

2017թ. մարտի 30-ին ժամը 08:05 - 17:00 :

#### **Անցկացման վայրը՝**

**ՀՀ Սյունիքի մարզպետարան, Կապան քաղաք Գ. Նժդեհ 1 :**

#### **Ելակետային տվյալները՝**

ՀՀ Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Վայոց Ձորի մարզին, հարավից՝ պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանին: Օգտակար հանածոներով ամենահարուստ մարզն է: Ծովի մակերևույթից 3 250 մ բարձրության վրա՝ Կապույտ լճից սկիզբ է առնում Մեղրի գետը,



իսկ Կապուտջուղ լեռան (3 905 մ) հալոցքաջրերից՝ Կապուտջուղ գետը, որի հետ Քաջարանից գետի միահյուսումից կազմավորվում է Ողջի գետը:

«Սյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով «Վ ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ: Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են: Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր եղջերավոր անասունների բուծում) մեջ: Մարզի տարածքով է անցնում Հայաստանն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2008թ.-ին շահագործման է հանձնվել «Կապան-Ծավ-Մեղրի» ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որը, որպես այլընտրանք «Կապան-Քաջարան-Մեղրի» միջպետական ճանապարհին՝ տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինիս:

Մարզի տարածքն աչքի է ընկնում իր բարդ լեռնային ռելիեֆով: Մարզի տարածքն ամբողջությամբ սեյսմավտանգ է, գտնվում է 8 բալ ուժգնությամբ սեյսմիկ գոտում և պարբերաբար ենթարկվում է երկրաշարժերի ազդեցությանը:

Սիսիան քաղաքը գտնվում է Երևանից մոտ 217 կմ հեռավորության վրա, Երևան-ԼՂՀ, Երևան-Իրան ավտոմայրուղուց 6-7 կմ հարավ, Որոտան գետի երկու ափերին, ծովի մակարդակից 1600 մ բարձրության վրա, մշտական բնակչությունը կազմում է 15.635 մարդ: Սիսիանի տարածաշրջանը, քաղաքի հետ միասին, ունի 1719 կմ<sup>2</sup> մակերես: Ունի լեռնային մակերևույթ, մինչև 3552 մ ( Իշխանասար ) բարձրություն: Տարածքում են գտնվում Չանգեզուրի լեռնաշղթայի կենտրոնական և Ղարաբաղի հրաբխային բարձրավանդակի արևմտյան մասերը: Կան մոլիբդենի, պղնձի, շինանյութերի, դիատոմիտի հանքավայրեր, հանքային ջրեր: Տարածված են լեռնատափաստանային և լեռնամարգագետնային լանդշաֆտները: Ունի չափավոր ցամաքային կլիմա: Հունվարի միջին ջերմաստիճանը -3°C-ից մինչև -12°C է, հուլիսինը՝ 10-18°C, տարեկան տեղումները՝ 400-800 մմ, վեգետացիայի շրջանը՝ 20-160 օր: Տարածքով հոսում է Որոտանը՝ ԱրագիջուրՇաղաթ, Սիսիան, Այրի, Շաքի, Լորածոր վտակներով: Գործում են Շամբի, Սպանդարյանի հիդրոէլեկտրակայանները, Տոլրսի, Շամբի, Անգեղակոթի և Սպանդարյանի ջրամբարները, Սիսիանի ջրանցքը: Տարածքը հատվում է բազմաթիվ սեյսմակտիվ բեկվածքներով, որոնց համադրվում են տարբեր ուժգնության երկրաշարժերի օջախները:

### **Ստեղծված իրավիճակը՝**

2017թ. մարտի 30-ին ժամը 07<sup>55</sup>-ին Սյունիքի մարզի տարածքում, Սիսիան քաղաքից 25 կմ հյուսիս-արևելք, 10 կմ խորության վրա տեղի է ունեցել 5,5 մագնիտուդով (ըստ Ռիխտերի ) երկարաշարժ: Սիսիանում և հարակից համայնքներում ինտենսիվությունը ըստ MSK-64 սանդղակի կազմել է 6-7 բալ: Նախնական տվյալներով Սիսիան քաղաքում կան շենք-շինությունների ավերածություններ, ստեղծվել է ծանր ինժեներական, բժշկական և հրդեհային իրավիճակ: Քաղաքը զրկվել է

էներգոմատակարարումից և գազամատակարարումից: Վնասվել և երթևեկության համար դարձել է ոչ պիտանի Որոտան գետի վրա կառուցված կենտրոնական

կամուրջը: Չի գործում բջջային կապը, հաղորդակցման ուղիները և կոմունիկացիոն համակարգերը: Հզոր ցնցումներից վնասվել է Սպանդարյան ջրամբարի պատվարը, որի վրա առաջացել է ճեղքվածք՝ 5մ լայնությամբ և 11մ երկարությամբ, ինչի հետևանքով ջուրը դուրս է հոսում մեծ քանակությամբ: Պատվարի փլուզման դեպքում Որոտան գետի ջրի մակարդակը կտրուկ կարող է բարձրանալ, ինչի հետևանքով ջուրը կարող է լցվել քաղաքի ցածրադիր թաղամասերը և քաղաքի մի մասը կհայտնվի ջրածածկման գոտում: Առավել վտանգավոր իրավիճակում կարող են հայտնվել Սիսիան քաղաքը, ՌԻԾ, Բալաք, Շաղատ, Շամբ և Որոտան համայնքները, որտեղ ջուրը վնաս կհասցնի բնակելի տներին, ցանքատարածքներին և այգիներին, որը կհանգեցնի մարդկային կորուստների և խոշոր նյութական վնասի:

**Ի ՓՈՒԼ** - «Սիսիան քաղաքում ուժեղ երկրաշարժի դեպքում իրավիճակի գնահատում»:

**Փուլի տևողությունը** - աստղաբաշխական ժամանակով՝ Ժ.08:00-ից---12:00-ը 30.03.2017թ  
- օպերատիվ ժամանակով՝ Ժ. 08:00-ից -14:00-ը 30.03.2017թ.

### **Մասնակի իրավիճակը՝**

Սիսիան քաղաքում փլուզվել են շենք-շինություններ, բնակչության շրջանում կան զոհեր, վիրավորներ և անհայտ կորածներ: Ուժեղ երկրաշարժի հետևանքով փլվել և վնասվել են Ֆիզկուլտուրնիկների, Որոտան և Զ. Անդրանիկի թաղամասերը /բնակիչների թիվը 1655/: Ստեղծվել է բարդ սանիտարական իրավիճակ, կան խցանված ճանապարհներ, առկա են հրդեհների օջախներ, մասնակի շարքից դուրս են եկել կոմունալ-էներգետիկ, կապի և հեռահաղորդակցության ցանցերը: Բնակչությունը փորձում է ձեռքի տակ եղած գործիքներով փլատակների տակից դուրս բերել հարազատներին: Երկրաշարժի հետցնցումների հետևանքով հնարավոր են նոր ավերածություններ և փլուզումներ: Բնակչության մոտ սկսվել է խուճապ:

### **Ուսումնական հարցերը՝**

1. Ղեկավար կազմի ազդարարում, հավաք և խնդրադրում:
2. Հետախուզության իրականացում և իրավիճակի գնահատում:

### **Ռիսուցանվողների գործողությունները՝**

Ռիսումնավարժության մասնակիցները ստանալով հավաքի ազդանշան, ներկայանում են Սյունիքի մարզպետարանի վարչական շենք ՀՀ Սյունիքի մարզպետի մոտ խորհրդակցության: Սյունիքի ՄՓՎ պետը մարզպետին ներկայացնում է ստեղծված իրավիճակը և զեկուցում խորհրդակցությանը պատրաստ լինելու մասին: Պարզաբանում են ստեղծված իրավիճակը և յուրաքանչյուրի խնդիրներն ու անելիքները: Գործողության մեջ է դրվում «Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Սյունիքի մարզի գործողությունների պլան»-ը: Իրականացնում են հետախուզություն՝ իրական վիճակը գնահատելու և անհրաժեշտ փրկարարական և կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու համար: Թաղամասերից ճշտվում և ճշգրտվում են ավերված և վնասված շենքերի ավերածության

աստիճանները, փլատակների տակ մնացած բնակիչների հավանական թիվը և տեղը, արձագանքող ուժերի կազմը, Սյունիքի ՄՓՎ փրկարարական ուժերի կազմը, վիճակը և փրկարարական աշխատանքների կատարման հնարավորությունը և այդ նպատակով մարզի վթարավերականգնողական ուժերի և բնակչության ներգրավման անհրաժեշտությունը, վտանգավոր գոտի ուժերի մուտքի առավել նպատակահարմար ուղղությունները, աշխատանքների կատարման եղանակները և անվտանգությունն ապահովող միջոցները: Ուժեղացվում են հատուկ, կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների հսկողությունը, համակարգում են բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը: Նշվում են ներգրավված ուժերի համագործակցության կարգը, պահեստային ուժերի և միջոցների կազմն ու տեղաբաշխումը: Տարվում են բացատրական աշխատանքներ բնակչության շրջանում խուճապը կանխելու համար:

**II ՓՈՒԼ** ---- «Որոնողափրկարարական ու անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում» :

**Փուլի տևողությունը** - աստղաբաշխական ժամանակով-ժ.13:00-ից-17:00-ը 30.03.2017թ.  
- օպերատիվ ժամանակով -ժ.11:00-ից 30.03.2017թ մինչև  
փրկարարական աշխատանքների ավարտ

### **Մասնակի իրավիճակը.**

Երկրաշարժի հետևանքով ամբողջովին փլվել են Ֆիզկուլտուրնիկներ N 2 , N 6, Որոտան N3 , N5 և Զ. Անդրանիկի N 1 , N 5 շենքերը, որտեղ բնակվում է 1010 մարդ : Ըստ նախնական տվյալների փլատակների տակ մնացել են 151 մարդ, որոնց մեջ կան երեխաներ, ծերեր, կանայք և հաշմանդամներ, իսկ 415 մարդ ստացել են բազմաթիվ կտրվածքներ և վնասվածքներ, որոնց անհրաժեշտ է ցուցաբերել առաջին օգնություն: Հզոր ցնցումներից փլվել է կենտրոնական կամուրջը. ինչի հետևանքով խափանվել է երթևեկությունը քաղաքի տվյալ հատվածում: Կամրջի երկաթբետոնյա կոնստրուկցիաների մնացորդները խանգարում են Որոտան գետի ազատ հոսքը : Ճանապարհներին առաջացել են բազմաթիվ բեռնատար և մարդատար ավտոմեքենանրի խցանումներ: Ջրամբարի պատվարի ճեղքվածքը հետոնցման հետևանքով կարող է մեծանալ, ինչի հետևանքով ջրածածկման վտանգ է սպառնում Սիսիան քաղաքին, Բալաք, Շաղատ, Շամբ, Որոտան և Ույծ համայնքներին: Սիսիան աղաքում ձևավորվել են աշխատանքային տեղամասեր, որտեղ իրականացվում են որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ, աշխատանքներին ներգրավված են Սյունիքի ՄՓՎ ուժերը, մարզի առաջին կանչի ուժերը և բնակիչներից ձևավորված աշխատանքային խմբերը: Կենսապահովման նպատակով ստեղծվել են ջրի, սննդի, առաջին անհրաժեշտության իրերի բաշխման կետեր:

### **Ուսումնական հարցերը`**

1. Որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում Ֆիզկուլտուրնիկների, Որոտան և Զ.Անդրանիկի թաղամասերում :
2. Բնակչության տարահանման կազմակերպում:
3. Տարահանված բնակչության կենսապահովման կազմակերպում:

## Ռեսուրսանվորների գործողությունները.

Առաջարկություններ են ներկայացնում Ֆիզկուլտուրնիկների N 2 , N6, Որոտան N3 , N5 և Զ. Անդրանիկի N1, N5 շենքերում որոնողափրկարարական աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ :

Կազմակերպում են արձագանքող ուժերի փոխհամագործակցությունը: Ճշտում են ուժերը և խմբավորումները, ինչպես նաև որոշում են տեղադրել ոստիկանական հսկիչ կետեր և զգուշացնող ազդանշաններ, կարգավորել խցանված մեքենաների երթևեկությունը, սահմանափակել քաղաքացիների տեղաշարժը վտանգավոր գոտում, աղետի գոտի թույլատրել մուտք գործել միայն հատուկ անցագրերով մեքենաներին՝ չխանգարելու փրկարարների ու հատուկ ինժեներական տեխնիկայի աշխատանքները: Առաջարկություններ են ներկայացնում համապատասխան ուժերի ներգրավմամբ և մասնակցությամբ /«Հիդրո» ՍՊԸ, «Նոր բակ նորոգչին» ԲԲԸ/ իրականացնել ինժեներական և վթարավերականգնողական աշխատանքներ, ինժեներական տեխնիկայի գնությամբ հեռացնել փլված կամրջի երկաթբետոնյա կոնստրուկցիաների մնացորդները, մաքրել գետի հունը տվյալ հատվածում՝ ապահովելով ջրի ազատ ընթացքը և սկսել կամրջի վերանորոգման աշխատանքները: Սպանդարյան ջրամբարի պատվարի վթարը վերացնելու նպատակով որոշում են ջուրը ջրամբարից բաց թողնել վթարային կարգավորիչ պահեստային ելքով, լայնացնել գետի հունը Ռիյծ համայնքի տարածքում, որը հանդիսանում է կիրճի ամենանեղ հատվածը՝ ջրի ազատ ընթացքը ապահովելու նպատակով :

Մշակում են ՀՀ Սյունիքի մարզպետի որոշման նախագիծ՝ վնասված շենքերից բնակչության տարահանման մասին, կազմակերպում քաղաքացիներին պատկանող նյութական արժեքների գույքի պաշտպանությունը և պահպանությունը: Մարզի ԱԻ և տարահանման հանձնաժողովները իրականացնում են համապատասխան պլաններով նախատեսված տարահանման ենթակա և տարահանվող բնակչության ընդունման հավաքակայանների ծավալման հաշվարկներ, ճշգրտում տարահանման ենթակա բնակչության խնդիրները: ՀՀ Սյունիքի մարզպետարանը կենսաապահովման միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավվում են կազմակերպություններին և բնակչությանը, որոշում յուրաքանչյուր ծառայության անելիքները , կազմակերպում վտանգավոր տեղամասերից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանումը, ապահովում տարահանված բնակչությանը ժամանակավոր կացարաններով՝ տեղավորելով անօթևան բնակիչներին Սիսիան քաղաքի թիվ 1 և թիվ 2 հիմնական դպրոցներում, ՄՓՎ հետ համատեղ ճշտում ճանապարհների օգտագործման կարգը, նախապատրաստում տարահանված բնակչության կենսաապահովման միջոցառումների համար նախատեսված տրանսպորտային միջոցները, նախապատրաստում տարահանված բնակչությանը զանգվածային պատվաստման՝ համաճարակաբանական մարմինների ցուցումներին համապատասխան:

Ժամը 18 : 00-ին հայտարարվում է ուսումնավարժության ավարտ:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՄԱՐ



Ռ.ՍԱՐԳՍՅԱՆ

**ՊԼԱՆ**

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒԽՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐՇՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

**Թեմա՝**

«Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը ուժեղ երկրաշարժի դեպքում»

**Ուսումնավարժության նպատակները՝**

- 1) Կատարելագործել ղեկավար կազմի հմտություններն ու ունակություններն ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման և իրականացման գործում:
- 2) Ստուգել «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլան»-ի իրատեսությունը:

**Ուսումնավարժության մասնակիցների կազմը՝**

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմը, ՀՀ Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը, ՀՀ Սյունիքի մարզի տարահամայնության հանձնաժողովը, Սիսիանի համայնքապետարանը, ՀՀ ԱԻՆ ՓԾ Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը, «Գազարոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Սյունիքի գազաֆիկացման գազամատակարարման մասնաճյուղը, ՀՀ ԱԻՆ հիդրոգերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության Սյունիքի մարզային հիդրոմետ ծառայությունը, «Արմենտել» ՓԲԸ տեխնիկական բյուրոյի ֆիքսված կապի հարավային տարածքային կենտրոնը, ՀՀ Ոստիկանության Սյունիքի մարզային վարչությունը, «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ «Տաթև» մասնաճյուղը, ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայություն» ՊՈԱԿ -ը :

**Անցկացման ժամանակը՝**

2017թ. մարտի 30-ին ժամը 08:05 - 18:00 :

Անցկացման վայրը՝ ՀՀ Սյունիքի մարզպետարան, Կապան քաղաք Գ. Նժդեհ 1 :

Ժամը	Ուսումնական	Իրավիճակը	Ռե-սուցանվողների	Ռե-սումնավարժության	Միջնորդներ
------	-------------	-----------	------------------	---------------------	------------

Օպ.	Աստ ղ.	հարցերը	/միջանկյալների բովանդակությունը/	գործողությունները	ղեկավարի գործողությունները	գործողություններ
1	2	3	4	5	6	7
<b>I ՓՈՒԼ</b> - « Սիսիան քաղաքում ուժեղ երկրաշարժի դեպքում իրավիճակի գնահատում » : <b>Փուլի տևողությունը</b> -աստղաբաշխական ժամանակով՝ ժ.08:00-ից--12:00-ը, 30.03.2017թ. - օպերատիվ ժամանակով՝ ժ. 08:00-ից -14:00-ը, 30.03.2017թ.						
30.03 08:00 09:30		<b>Ղեկավար կազմի ազդարարում, հավաք և խնդրադրում</b>	2017թ. մարտի 30-ին ժամը 07:55-ին Սյունիքի մարզի տարածքում, Սիսիան քաղաքից 25 կմ հյուսիս-արևելք, 10 կմ խորության վրա տեղի է ունեցել 5,5 մագնիստորով (ըստ Ռիխտերի ) երկարաշարժ: Սիսիանում և հարակից համայնքներում ինտենսիվությունը ըստ MSK-64 սանդղակի կազմել է 6-7 բալ: Նախնական տվյալներով Սիսիան քաղաքում կան 2 ենթ-շինությունների ավերածություններ, ստեղծվել է ծանր ինժեներական, բժշկական և հրդեհային իրավիճակ: Քաղաքը	Սյունիքի ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգիչը իրականացնում է Սյունիքի մարզի ղեկավար կազմի ազդարարումը: ՌԽ-ումնավարժության մասնակիցները ստանալով հավաքի ազդանշան, են Սյունիքի մարզպետարանի վարչական շենք ՀՀ Սյունիքի մարզպետի մոտ խորհրդակցության: Սյունիքի ՄՓՎ պետը մարզպետին ներկայացնում է ստեղծված իրավիճակը և զեկուցում խորհրդակցությանը պատրաստ լինելու մասին: Գործողության մեջ է դրվում «ՌԽ-ժեղ	ՌԽ-ումնավարժության ղեկավարը մարզային փրկարարական վարչության պետին տալիս է կարգադրություն ուսումնավարժության մասնակիցների ազդարարում և հավաք իրականացնելու վերաբերյալ: ՃՌԽ-ն ղեկավարման շտաբի միջոցով հետևում է ազդարարման և հավաքի ընթացքին: Ընդունում է ՄՓՎ պետի զեկուցը խորհրդակցությանը պատրաստ լինելու վերաբերյալ: Խորհրդակցության ընթացքում ծանոթացնում է իրավիճակին : Հրաման է տալիս «ՌԽ-ժեղ երկրաշարժի	Միջնորդները ստուգում են ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգիչի գործողություն ները ազդանշան ստանալու ընթացքում : Առանձնահատուկ ուշադրություն են դարձնում ազդարարման կազմակերպման և սահմանված ժամկետում իրականացման վրա : Տեղերում միջնորդները վերահսկում են հավաքի ազդանշանի ժամանակին ընդունման ու հավաքին ներկայանալու սահմանված

		<p>գրվել է          էներգումատակարար-          րումից և          գազամատակարարու          -մից: Վնասվել և          երթևեկության          համար դարձել է ոչ          պիտանի Որոտան          գետի վրա          կառուցված          կենտրոնական          կամուրջը: Չի          գործում բջջային          կապը, հաղորդակ          ցման ուղիները և          կոմունիկացիոն          համակարգերը:          Սիսիան քաղաքում          փլուզվել են շենք          շինություններ,          բնակչության          շրջանում կան զոհեր,          վիրավորներ և          անհայտ կորածներ:          Ուժեղ երկրաշարժի          հետևանքով փլվել և          վնասվել են          Ֆիզկուլտուրնիկներ,          Որոտան և Զ.          Անդրանիկի          թաղամասերը/          բնակիչների թիվը          1655 / :</p>	<p>երկրաշարժի դեպքում          ՀՀ Սյունիքի մարզի          գործողությունների          պլան»-ը:          Պարզաբանում են          ստեղծված          իրավիճակը և          յուրաքանչյուրի          խնդիրներն ու          անելիքները: Բոլոր          մակարդակներում          պատրաստության են          բերվում կառավարման          կետերը, կապի և          ազդարարման          միջոցները:</p>	<p>դեպքում ՀՀ Սյունիքի          մարզի գործողություն          ների պլան»-ը          գործողության մեջ          դնելու մասին :</p>	<p>ժամկետները :          Ներկա գտնվելով          մարզպետի մոտ          կայացած          խորհրդակցության          նը, օգնում են          մասնակիցներին          խնդիրների          պարզաբանման          ու յուրացման          հարցերում :</p>
--	--	--	---	---	--

<p>30.03 09:30 17:00</p>	<p>Հետախուզության իրականացում և իրավիճակի գնահատում</p>	<p>Առավել վտանգավոր է իրավիճակը Ֆիզկուլտուրնիկներ, Որոտան և Ջ. Անդրանիկի թաղամասերի բնակիչների համար : Ստեղծվել է բարդ սանիտարական իրավիճակ, կան խցանված ճանապարհներ, առկա են հրդեհների օջախներ, մասնակի շարքից դուրս են եկել կոմնալ-էներգետիկ, կապի և հեռահաղորդակցու- թյան ցանցերը:</p>	<p>Իրականացնում են հետախուզություն՝ իրական վիճակը գնահատելու և անհրաժեշտ փրկարարական և կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու համար: Չեկուցում են հետախուզության արդյունքների մասին, որի հիման վրա ՄՓՎ պետը ներկայացնում է առաջարկություններ որոնողափրկարարա կան և անհետաձգելի վթարավերականգն ղական աշխատանք ներ կազմակերպելու և իրականացնելու վերաբերյալ: Թաղամասերից ճշտվում և ճշգրտվում են ավերված և վնասված շենքերի ավերածության աստիճանները, փլատակների տակ մնացած բնակիչների հավանական թիվը և տեղը, արձագանքող ուժերի կազմը.</p>	<p>Հրաման է տալիս Սիսիան համայնքի ղեկավարին և ծառայությունների պետերին Սիսիան քաղաքի Ֆիզկուլտուրնիկներ, Որոտան և Ջ. Անդրանիկի թաղամասերում հետախուզություն իրականացնելու վերաբերյալ:</p>	<p>Հետևում են հետախուզության կազմակերպման և հետախուզական տվյալների հավաքագրման ընթացքին:</p>
----------------------------------	---	---	---	--	--



Սյունիքի ՄՓՎ  
փրկարարական  
ուժերի կազմը,  
վիճակը և  
փրկարարական  
աշխատանքների  
կատարման  
ինարավորությունը և  
այդ նպատակով  
մարզի  
վթարավերականգնող  
ական ուժերի և  
քնակչության  
ներգրավման  
անհրաժեշտությունը,  
վտանգավոր գոտի  
ուժերի մուտքի  
առավել  
նպատակահարմար  
ուղղությունները,  
աշխատանքների  
կատարման  
եղանակները և  
անվտանգությունն  
ապահովող  
միջոցները:  
Ուժեղացվում են  
հատուկ,  
կարևորագույն  
նշանակություն  
ունեցող օբյեկտների  
հսկողությունը,  
համակարգում են

		<p>բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը :</p>		<p>բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը :</p>	
		<p>Իրականացնում են միջոցառումներ համաձայն տրված միջանկյալների:</p>	<p>Իրավիճակը ըստ թիվ 1-3 միջանկյալների:</p>	<p>Տրվում է միջանկյալներ 1- 3</p>	<p>Միջնորդները ներկայանում են խորհրդակցու թայնը, մասնակցում ունենում են և հարցերի քննարկմանը:</p>
		<p>Ներկայանում են խորհրդակցության և զեկուցում առաջին փուլում կատարված աշխատանքների մասին :</p>		<p>Առաջին փուլի ամփոփում</p>	<p>ՌՆկներում և քննարկում է մասնակիցների զեկույցները առաջին փուլում կատարած աշխատանքների վերաբերյալ, տալիս գնահատական կատարված աշխատանքների մասին :</p>
<p><b>II ՓՈՒԼ</b> ---- «Որոնողափրկարարական ու անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում» :</p> <p><b>Փուլի տևողությունը</b> - աստղաբաշխական ժամանակով – ժ.13:00-ից-17:00-ը 30.03.2017թ.</p> <p>– օպերատիվ ժամանակով –ժ.11:00-ից 30.03.2017թ մինչև փրկարարական աշխատանքների ավարտ</p>					
<p>30.03 11:00 մինչև փրկարարական</p>	<p>30.03 13:00 14:00</p>	<p>Որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների</p>	<p>Փրկված Ֆիզկուլտուրնիկների N2, N 6, Որոտանի N3, N5 և 2. Անդրանիկի N1, N 5</p>	<p>Մտացարկություններ են ներկայացնում Ֆիզկուլտուրնիկներ N 2 , N 6, Որոտանի N3 , N5 և 2. Անդրանիկի</p>	<p>Հետևում են ուսուցանվողների գործողություններին և օգնում խնդիրների յուրացման և</p>



Է մեծանալ, ինչի  
հետևանքով  
ջրածածկման  
վտանգ է սպանում  
Սիսիան քաղաքի  
ցածրադիր և  
ափամերձ  
տարածքներին,  
Բալաք, Շաղատ,  
Շամբ, Որոտան և  
Ույծ համայնքներին :

տեխնիկայի  
աշխատանքները:  
Առաջարկություններ են  
ներկայացնում  
համապատասխան  
ուժերի ներգրավմամբ  
և մասնակցությամբ /  
<<Հիրո >> ՍՊԸ,  
<<Նոր բակ  
նորոգչին>> ԲԲԸ /  
իրականացնել  
ինժեներական և  
վթարավերականգնող  
ական աշխատանք  
ներ, ինժեներական  
տեխնիկայի  
օգնությամբ հեռացնել  
փլված կամրջի  
երկաթբետոնյա  
կոնստրուկցիաների  
մնացորդները և սկսել  
կամրջի  
վերանորոգման  
աշխատանքները :  
Սպանդարյան  
ջրամբարի պատկարի  
վթարը վերացնելու  
նպատակով որոշում  
են ջուրը ջրամբարից  
բաց թողնել  
վթարային  
կարգավորիչ  
պահեստային ելքով.

	<p>Հետևում են ուսուցանվողների գործողություններին և ցուցաբերում մեթոդական օգնություն :</p>
	<p>Ղեկավարման շտաբի և միջնորդների միջոցով իրականացնում է բնակչության տարահամայնային խնդիրների գործընթացը:</p>
<p>լայնացնել գետի հունը ՈՒԾ համայնքի տարածքում, որը հանդիսանում է Կիրճի ամենանեղ հատվածը՝ ջրի ազատ ընթացքը ապահովելու նպատակով :</p>	<p>Մշակում են ՀՀ Այունիքի մարզպետի որոշման նախագիծ՝ վնասված շենքերից բնակչության տարահամայնային կազմակերպում քաղաքացիներին պատկանող նյութական արժեքների գույքի պաշտպանությունը և պահպանությունը: Մարզի ԱԻ և տարահամայնային հանձնաժողովները իրականացնում են համապատասխան պլաններով նախատեսված տարահամայնային ենթակառուցվածքի և տարահամայնային բնակչության ընդունման</p>
<p>Երկրաշարժի հետևանքով ամբողջովին փլուզել են Ֆիզկուլտուրնիկների N2, N6, Որտան N3, N5 և 2. Անդրանիկի N1, N5 շենքերը, որտեղ բնակվում է 1010 մարդ :</p>	<p>Բնակչության տարահամայնային կազմակերպում</p>
<p>30.03 14:00 17:30</p>	<p>30.03 14:00 14:30</p>

<p>30.03 17:00 մինչև ավար տ</p>	<p>30.03 14:30 17:00</p>	<p>Տարահանված բնակչության կենսաապահովման կազմակերպում</p>	<p>Տարահանված Ֆիզկուլտուրիստների, Որոտան և Ջ. Անդրանիկ Թաղամասերի բնակիչները մնացել են անօթևան :</p>	<p>հավաքակալայանների ծավալման հաշվարկներ, ճշգրտում տարահանման ենթակա բնակչության խնդիրները :</p>	<p>Տալիս է կարգադրություն տարահանված բնակչության կենսաապահովման միջոցառումների կազմակերպման վերաբերյալ ;</p>	<p>Հետևում են ուսու- ցանվորների գոր- ծողություններին և ցուցաբերում մեթոդական օգնություն :</p>
		<p>Սյունիքի մարզպետարանը կենսաապահովման միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավվում է կազմակերպություն ներին և բնակչությանը, որոշում յուրաքանչյուր ծառայության անելիքները , կազմակերպում վտանգավոր տեղամասերից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանումը, ապահովում տուժած բնակչությանը ժամանակավոր կացարաններով տեղավորելով</p>				

			<p>անօթևան բնակիչներին Սիսիան քաղաքի թիվ 1 և թիվ 2 հիմնական դպրոցներում, ՄՓՎ հետ համատեղ ճշտում ճանապարհների օգտագործման կարգը, նախապատրաստում տարահանված բնակչության կենսապահովման միջոցառումների համար նախատեսված տրանսպորտային միջոցները, նախապատրաստում տարահանված բնակչությանը զանգվածային պատվաստման համաճարակաբանական մարմինների ցուցումներին համապատասխան :</p>		
<p>ժ. 14:10-ից 16:00</p>	<p>Տրվում է թիվ 4 - 10</p>	<p>Իրավիճակը ըստ թիվ 4 - 11 միջանկյալների:</p>	<p>Իրականացնում են միջոցառումներ համաճայն տրված միջանկյալների: Երկայանում են</p>	<p>Ռևենյուրում և քննար-</p>	<p>Միջնորդները</p>

30.03 17:00 18:00	II փուլի ամփոփում		խորհրդակցության և զեկուցում երկրորդ փուլում կատարված աշխատանքների մասին :	կում է մասնակիցների զեկուցները երկրորդ փուլում կատարած աշխատանքների վերաբերյալ, տալիս գնահատական կատարված աշխատանքների մասին , ամփոփում ուսումնավարության արդյունքները, մատնանշում ուժեղ և թույլ կողմերը :	ներկայանում են խորհրդակցու թյանը, մասնակցում ունենդումանը և ներկայացնում իրենց նկատառումները և առաջարկու թյունները :
ժ. 18:00	Ուսումնավարության ավարտ			Ուսումնավարության ղեկավարը հայտարարում է ուսումնավարության ավարտ :	

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

*(Handwritten signature)*

Ռ. ՄԱՐԳԱՅԱՆ






**ՊԼԱՆ  
 ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՓԱՑՄԱՆ**

Միջանկյալի տրման ժամը	Միջանկյալների բովանդակությունը	Ով է հանձնում	Ում է հանձնում
<b>I ՓՈՒԼ</b> - «	Միսիան քաղաքում ուժեղ երկրաշարժի դեպքում իրավիճակի գնահատում » : <b>Փուլի տևողությունը</b> -աստղաբաշխական ժամանակով՝ժ.08:00-ից---12:00-ը 30.03.2017թ - օպերատիվ ժամանակով՝ ժ. 08:00-ից -14:00-ը 30.03.2017թ.		
ժ. 10:00	<b>Միջանկյալ թիվ 1</b> Փլուզվել է թիվ 2 հիմնական դպրոցի գլխավոր մասնաշենքը : Կան 7 տուժած :	Ուսումնավարժության ղեկավարը	Տրվում է բոլորին
ժ.10:30	<b>Միջանկյալ թիվ 2</b> Սիսական 5 շենքի տարածքում առկա է գազի արտահոսք :	Ուսումնավարժության ղեկավարը	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Սյունիք ԳԳՄ տնօրենին
ժ.10:50	<b>Միջանկյալ թիվ 3</b> Բետոնյա փվածքներից փակվել է «Մշակույթի տան» մուտքը: Կան 4 տուժած :	Ուսումնավարժության ղեկավարը	Սյունիքի ՄՓՎ, ՀՀ Ոստիկանության Սյունիքի մարզային վարչություն
<b>II ՓՈՒԼ</b> ----	«Որոնողափրկարարական ու անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում» : <b>Փուլի տևողությունը</b> - աստղաբաշխական ժամանակով - ժ.13:00-ից-17:00-ը 30.03. 2017թ օպերատիվ ժամանակով -ժ.11:00-ից 30.03.2017թ մինչև փրկարարական աշխատանքների ավարտ		
ժ. 14:30	<b>Միջանկյալ թիվ 4</b> Բնակչության տարահանումն իրականացնող ակտորաններից երկուսը խափանվել են	Ուսումնավարժության ղեկավարը	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժին .
ժ. 14:40	<b>Միջանկյալ թիվ 5</b> Առավել ծանր վիճակում գտնվող թվով 25 տուժածների անհրաժեշտ է տեղափոխել ք. Երևան	Ուսումնավարժության ղեկավարը	ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն, ՀՀ Լևոնտի մուտամուտունի

<p>աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժին .</p>			
<p>Սիսիանի քաղաքապետին</p>	<p>Ռիսունավարժության ղեկավարը</p>	<p><b>Միջանկյալ թիվ 6</b> Որոտան գետի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ջրածածկման գոտում են հայտնվել քաղաքի ցածրադիր թաղամասերը և ավիաներձ տարածքները</p>	<p>ժ. 14:50</p>
<p>ՀՀ Ոստիկանության Սյունիքի մարզային վարչություն</p>	<p>Ռիսունավարժության ղեկավարը</p>	<p><b>Միջանկյալ թիվ 7</b> Սահմանափակել բնակչության շարժը դեպի վտանգավոր տարածքներ</p>	<p>ժ. 15:00</p>
<p>«Արմենտել» ՓԲԸ տեխնիկական բլոկի ֆիզսված կապի հարավային տարածքային կենտրոն</p>	<p>Ռիսունավարժության ղեկավարը</p>	<p><b>Միջանկյալ թիվ 8</b> Սիսիական, Որոտան, Երիտասարդական և Ֆիզկուլտուրիկներ թաղամասերում ընդհատվել է հաղորդակցությունը քաղաքի մյուս թաղամասերի հետ</p>	<p>ժ. 15:15</p>
<p>ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժին, ՀՀ Ոստիկանության Սյունիքի մարզային վարչություն</p>	<p>Ռիսունավարժության ղեկավարը</p>	<p><b>Միջանկյալ թիվ 9</b> Կատարել գոհվածների և տուժածների հաշվառում, ձեռնարկել համապատասխան միջոցառումներ դիակապտության և կորուպտի դեպքերը բացառելու նպատակով</p>	<p>ժ. 15:40</p>
<p>«Հայաստանի էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ «Տարթ» մասնաճյուղ</p>	<p>Ռիսունավարժության ղեկավարը</p>	<p><b>Միջանկյալ թիվ 10</b> Սայաթ Լուվա, Իսրայել Օրի, Այգեստան և Գայի թաղամասերում ընդհատվել է էներգամատակարարումը</p>	<p>ժ. 16:00</p>



ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՎԱԶՄԻ ՌԵՍՈՒՆԱՎԱՐԺՍՏՆԵՐԻ ԳՐԱՆՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ ՈՒՍԱՐԳԱՅԱՆ